ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Նախապատերազմյան երկու տասնամյակներում ՍՍՀՄ եղբայրական ընտանիքում անխախտելի զարգացում ապրեց Մեծ Հոկտեմբերի ծնունդ Սովետական Հայաստանը։ Այդ ընթացքում հանրապետությունում աճեց և կազմավորվեց սոցիալիզմի գործին նվիրված ժողովրդական մտավորականության բանակը։ Գիտական, ուսումնական և ստեղծագործական կոլեկտիվներում համախմբված մտավորականությունը կերտում էր նորը, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։

1941 թ. հուլիսի 7-ին տեղի ունեցած Երևան քաղաքի մտավորականության միտինգում հանդես եկան նաև գիտության և կուլտուրայի գործիչները։ Միտինգում ընդունված որոշման մեջ ասված էր. «Ելնենք Հայրենական պատերազմի, կատարենք հայրենիքի հանդեպ մեր սրբազան պարտականությունը»[1]։

Հայրենական մեծ պատերազմը փոխեց սովետական մարդու հոգեբանությունը։ «Եթե առաջ, մինչև պատերազմը բանվորը կամ կոլտնտեսականը պլանը գերակատարում էր, արժանանում մրցանակի, իսկ այժմ,— 1943 թ. հունիսի 23-ին կուսակցության Սպանդարյանի շրջանային կազմակերպության կոնֆերանսում հայտարարեց ՀՍՍՀ Ժողկոմսովետի արվեստի վարչության պետ Զ. Վարդանյանը,— 300 տոկոսը սովորական երևույթ է մեր ժողովրդի համար։ Այդ նշանակում է, որ պատերազմը կյանքի է կոչել մասսայական հերոսությունը և մեր արվեստը պետք է արտացոլի այդ մասսայական հերոսությունը, այդ նոր երևույթը»[2]։ Եվ արվեստը պարտավոր էր արտացոլելու հրաշքներ գործող սովետական մարդկանց սխրանքները, «որպեսզի մարդկությունը հիշի այդ—այդ է մեր արվեստի խնդիրը»[3]։

Սովետական արվեստը, կարճ ժամկետում վերակառուցելով աշխատանքները, վերաճեց ժողովրդի ուժերի մոբիլիզացման վիթխարի գործոնի։ Արվեստի աշխատողներից շատերը մեկնեցին ռազմաճակատ։ Սովետական զինվորի սխրանքը հավերժացնելու համար ռազմաճակատ մեկնեցին սովետական ավելի քան 250 կինոօպերատորներ։ Սովետական զինվորի սխրանքը պատկերող կինոժապավենները պատմությանը թողեցին նաև հայ կինոօպերատորներ Ի. Դիլդարյանը, Վ. Հայկազյանը, Գ. Սանամյանը, Գ. Եղիազարյանը[4]։

1941 թ. նոյեմբերին թշնամին կանգնած էր Մոսկվայի մատույցներում։ Սովետական ժողովուրդն անում էր ամեն ինչ՝ փոխելու իրադարձությունների ընթացքը ռազմաճակատում, անառիկ դարձնելու մայրաքաղաքը, փակելու թշնամու ճանապարհը։ Երկրում, ամենուրեք, մարդիկ ձգտում էին տեղ գրավել Մոսկվայի պաշտպանների շարքերում։ Եվ ահա այդ օրերին ՀԿ(բ)Կ Կենտկոմ դիմեց Երևանի կինոստուդիայի ռեժիսոր Է. Քարամյանը՝ խնդրելով ժողովրդական աշխարհազորի 50 մարտիկների հետ իրեն ուղարկել մասնակցելու Մոսկվայի պաշտպանությանը։ «Թող վերջինի (իրենց մասնակցության—Վ. Պ.) նշանակությունը չնչին լինի,— գրում է նա,— բայց արտակարգ կարևոր է, որ

---

1 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 1, էջ 211։

2 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 32, գ. 343, թ. 101։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, գ. 24ա, թ. 108։

մենք՝ երևանցիներս, մոսկվացիների շարքում պաշտպանենք մեր ընդհանուր մայրաքաղաքը»[5]։

Վաթսուներկու տարեկան էր նշանավոր կոմպոզիտոր Ա. Տիգրանյանը, երբ սկսվեց Մեծ հայրենականը։ Կոմպոզիտորը, քաղաքացին, չբավարարվելով հայրենասիրական ռազմաշունչ երաժշտություն հյուսելով, դիմեց ՀԿ(բ)Կ Կենտկոմին՝ պաշտպանության պետական կոմիտեի նախագահին զենքի նոր տեսակի իր գյուտը հաղորդելու խնդրանքով[6]։ ՍՍՀՄ սպառազինության ժողկոմ Դ. Ուստինովն ըստ արժանվույնն է գնահատում կոմպոզիտորի հայրենասիրական նախաձեռնությունը[7]։ Այստեղ կարևորն այն չէ, որ առաջարկությանն ընթացք չի տրվել, այլ այն, որ ծերության հասած կոմպոզիտորը դրրսևորում էր բուռն ցանկություն՝ գործնականում օգնելու սովետական բանակին։

Պատերազմի առաջին երկու տարում Հայաստանի կոմպոզիտորները ստեղծեցին 300 նոր երգեր, երաժշտական մեծ կտավի գործեր, փառաբանելով սովետական մարդու սխրանքը[8]։ Պատերազմի տարիներին Հայաստանի պետական ջաղի կոլեկտիվը զորամասերում ու հոսպիտալներում տվել է 410 ռազմաշեֆական համերգ։ Ամենուրեք կոլեկտիվը հանդես է եկել մեծ վերելքով, արժանացել խրախուսանքի։

Մաքառման աստիճանի հասած սոցմրցությունը 1942 թ. մայիսից ընդունեց համամիութենական բնույթ։ Ինչպես միշտ, նրանում ընդգրկվեցին նաև ստեղծագործական կոլեկտիվները։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Երևանի հայֆիլհարմոնիայի կոլեկտիվը, ստանձնելով նոր պարտավորություններ, 1942 թ. մայիսի 26-ին արվեստի աշխատողներին ուղղված կոչում խնդիր դրեց. «1. Խորացնել ու ընդլայնել պաշտպանական և հակաֆաշիստական թեմատիկան, ամբողջ գեղարվեստական աշխատանքը ենթարկել Հայրենական մեծ պատերազմի շահերին։

2. Աշխատել ռազմական ձևով ցանկացած պայմաններում, առանց հաշվի առնելու խաղաղ ժամանակվա նորմաները։

3. 1942 թվականի հերթական արձակուրդը ամբողջովին նվիրել ԲԳԿԲ զորամասերի և գյուղատնտեսության բերքահավաքի կամպանիայի գեղարվեստական սպասարկման գործին»[9]։

Ստեղծագործական կոլեկտիվները պատվով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։ Ռազմաճակատի որ հատվածում ասեք, որ չեղան սովետական արվեստի աշխատողներ։ Մեծ Հոկտեմբերի տարեդարձի առթիվ Մերձալթյան առաջին ռազմաճակատի մարտիկներին այցելած Բելոռուսիայի, Լիտվայի, Լատվիայի և Դաղստանի արվեստի աշխատողների պատվիրակությունների հետ էր Հայաստանի պատվիրակությունը։ «Արժե հիշատակել,— գրել է փառաբանված մարշալ Հ. Բաղրամյանը,— որ գրեթե մեկ ամիս ռազմաճակատի զորամասերում մեծ հաջողությամբ համերգներ էր տալիս Հայաստանի ժողովրդական երգի ու պարի տաղանդավոր անսամբլը, որի գեղարվեստական ղեկավարն էր Թաթուլ Տիգրանի Ալթունյանը»[10]։ Իսկ նույն ռազմաճակատի Շաուլյայի ավիացիոն կայազորի պետ, գնդապետ Վ. Ստալինը 1944 թ. հոկտեմբերի 17-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին ուղղած նամակում գրել է. «Կարմիր բանակի հարձակողական մարտերի պատմական այս օրերին մարտականորեն հնչեցին հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի համերգները գործող բանակի մեր միավորման օդաչուների մոտ՝ նրանց ոգեշնչելով մարտական նոր սխրանքների

5 Նույն տեղում, ց. 30, գ. 100, թ. 21։

6 Նույն տեղում, ց. 90, գ. 46, թ. 147։

7 Նույն տեղում, գ. 53, թ. 131։

8 Նույն տեղում, ց. 31, գ. 345, թ. 49։

9 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 598, ց. 3, գ. 78, թ. 7։

10 Ի. Ք. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, Երևան, 1979, էջ 62։

ընդդեմ ֆաշիստական դաղանի։ Արևավառ Հայաստանի տաղանդավոր արվեստը առաջացրեց անձնակազմի և աղատագրված Շաուլյա քաղաքի բնակչության համընդհանուր հրացմունքը»[11]։

Ագիտբրիգադի կազմում համերգային խումբը 1944 թ. հունիսին 89-րդ հայկական դիվիզիայի հյուրն էր։ «Դիվիզիայի ամբողջ անձնակազմը,— ՀԿ(բ)Կ Կենտկոմին գրել է գնդապետ Գ. Բլբուլյանը 1944 թ. հունիսի 15-ին,— մասնակցեց ընկ. Շարա Տալյանի գլխավորած արտիստների խմբի համերգներին և կարմիրբանակայինների հավաքներին, ուր ընկ. ընկ. Մկրտչյանը և Պետրոսյանը հանգամանալից զեկուցումներով հանդես եկան Հայաստանի աշխատավորության հաջողությունների մասին»[12]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմն իր աշխատանքի անբաժան մասն էր դարձրել սովետական բանակի հայաշատ զորամասերի կուլտուրական սպասարկման գործը։ Քաղաքական աշխատանքի նոր ձևերից էին համերգ-միտինգները, որոնք մեծ մասամբ կազմակերպվում էին նշանավոր տարելիցների, կարևոր իրադարձությունների առթիվ ինչպես թիկունքում, այնպես էլ ռազմաճակատում։ 1943 թ. փետրվարին սովետական բանակի 25-ամյակը նշվում էր երկրորդ համաշխարհային պատերազմում նրա մեծագույն սխրանքի՝ արմատական բեկման շրջանում։ ՀՍՍՀ Ժողկոմսովետի արվեստի գործերի վարչության և արվեստի աշխատողների արհմիության ռազմաշեֆական հանրապետական հանձնաժողովի որոշմամբ միայն փետրվարին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի 10 բրիգադներ սպասարկել են Հայաստանում տեղաբաշխված զորամասեր։ Թատրոնը բեմադրել է Գլինկայի «Իվան Սուսանին» հերոսական օպերան։ Պատանի հանդիսատեսի թատրոնը նույն ամսում 16 անգամ բեմադրել է Տ. Հախումյանի «Հայրենիքի որդին» հայրենասիրական պիեսը, կազմակերպել է 15 կուլտարշավ։

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան և երաժշտական ուսումնարանը տվել են 5 համերգ, ունեցել 13 ռադիոելույթ։ Երևանի ռուսական թատրոնը տվել է 8 ներկայացում, կատարել 50 կուլտարշավ, ադրբեջանական թատրոնը՝ 5 ներկայացում, 13 կուլտարշավ։ Միայն սովետական բանակի 25-ամյակի առթիվ մեկ ամսում զորամասերում և հոսպիտալներում Երևանի արվեստի աշխատողների 9 կոլեկտիվներ տվել են 63 ներկայացում, 61 համերգ, կազմակերպել 118 կուլտարշավ[13]։ Բոլոր միջոցառումների թեմատիկան հայրենիքի պաշտպանությունն էր։

Մեծ հայրենականի առաջին օրերից գեղարվեստական կոլեկտիվները ձեռնամուխ եղան գործող բանակի զորամասերի սպասարկման գործին։ Նրանք եղան Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, Սևծովյան ափերում, Մերձբալթիկայում, Իրանում։ 1941 թ. հուլիսից մինչև 1944 թ. հունվարը հանրապետության արվեստի աշխատողների 400 բրիգադներ տվեցին ավելի քան 8500 համերգ, ներկայացում և այլն[14]։ Հանրապետությունում պատերազմի տարիներին գործում էին 23 պետական թատրոններ և 96 կինոսարքեր[15]։

Պետական թատրոններին և ինքնագործ թատերական խմբերին տոն տրվողը Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվներն էին ու Երևանի ժողովրդական ստեղծագործության տունը։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում (գլխավոր դիրիժոր Մ. Թավրիզյան) իրականացվեց 14 նոր բեմադրություն, այդ թվում՝ Ա. Սպենդիարյանի «Խանդութ» բալետը, Տ. Չուխաջյանի «Արշակ Երկրորդ», Գլինկայի «Իվան Սուսանին», Զ. Պալիաշվիլու «Դախիս», Ռ. Հաջիբեկովի «Քյոռ Օղլի» օպերա-

11 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 377, թ. 102։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, ց. 32, գ. 400, թ. 26—27։

14 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 1, էջ 219։

15 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 31, գ. 10, թ. 23։

ները։ 1942 թ. հունվարի 11-ին և 12-ին կատարվեց Դ. Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիան[16]։

Արմատապես փոխվեց թատրոնների բեմացանկը։ Պատերազմի առաջին շրջանում բեմադրված 315 պիեսներից 205-ը նվիրված էին Մեծ հայրենականին։ Հանրապետության թատրոններում մեծ հաջողությամբ բեմադրվեցին Ա. Կորնեյչուկի «Ռազմաճակատը», Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ», Պ. Ռոկի «Ինժեներ Սերդենը», Վ. Առլովյովի «Ֆելդմարշալ Կուտուզովը», Ս. Վուրղունի «Վագիֆը», Ա. Զեյնալովի «Անհանգիստ սիրտը»։ Այդ շրջանում ՀՍՍՀ Ժողկոմսովետի արվեստի վարչության քննարկած 130 պիեսներից թույլատրվեց բեմադրել 43-ը, այդ թվում՝ Ն. Զարյանի «Վրեժը», Ա. Գուլակյանի «Ցասումը», Տ. Հախումյանի «Հայրենիքի որդին»[17]։

Վտանգի պահին հայրենիքի պաշտպանության վեհ գործին իրենց արվեստն ի նպաստ դրին նաև սովետահայ նկարիչները, որոնց հիմնական թեմատիկան դարձավ ռազմաճակատում և թիկունքում սովետական մարդու սքրանքի բացահայտումը։ «ՏԱՍՍ-ի պատուհանի» օրինակով ՀՀԳ-ին կից կազմված նկարիչների հատուկ բյուրոն («Արմտագի պատուհան») իր գլխավոր խնդիրը համարեց քաղաքական, հակաֆաշիստական սուր պլակատների ու ծաղրանկարների ստեղծումը։ Նկարիչների հարվածային խումբը, որի կազմի մեջ մտան Լ. Գենչը (Գենչոզլյան), Դ. Նալբանդյանը, Ա. Զիլինգարյանը, Ա. Մամաջանյանը, Մ. Բաղդասարյանը, Հ. Շավարշը և ուրիշներ, թողարկեց բազմաթիվ հակաֆաշիստական ծաղրանկար-պլակատներ[18]։ Միայն «Արմտագի պատուհանի» գլխավոր նկարիչ Ա. Արուտչյանը Հայրենական պատերազմի տարիներին ստեղծեց 400-ից ավելի քաղաքական պլակատներ, հակաֆաշիստական ծաղրանկարներ[19]։ Հայաստանի նկարիչների պատերազմի շրջանի գործերից հայտնի են «Տանյա» (Է. Խարեկյան), «Ազատարարը» (Ս. Սաֆարյան), «Զինվորի մահը» (Մ. Աբեղյան), «Օդաչու Գաբրիելյանի դիմանկարը» (Մ. Սարյան), «Պարտիզաններն ընթերցելիս» (Վ. Աղաբաբյան) և այլն։ «Արմտագի պատուհանը» կազմակերպեց բազմաթիվ շարժական ցուցահանդեսներ՝ Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի, ՀԿ(բ)Կ Երքաղկոմի պրոպագանդայի տան շենքերում, Շահումյանի հրապարակում և մարդաշատ այլ վայրերում։ Միայն պատերազմի առաջին 20 ամիսներին կազմակերպվեց 6 խոշոր ցուցահանդես, ուր ցուցադրվեցին 1000-ից ավելի գործեր։ Յուրաքանչյուր ցուցահանդեսին մասնակցում էին 40—80 նկարիչներ[20]։

Այսպիսով, Սովետական Հայաստանի ստեղծագործական մտավորականությունը Մեծ հայրենականի օրերին գրիչը սվինի վերածած մարտնչեց հանուն հայրենիքի։ Բազում մտավորականներ զենքը ձեռքներին մարտնչեցին ռազմաճակատում, մյուսները թիկունքում իրենց հնարավորությունների առավելագույնը ներդրեցին ժողովրդի հոգևոր ուժերը մոբիլիզացնելու համար։ Սովետական Հայաստանի ստեղծագործական մտավորականությունն իր հայրենանվեր գործունեությամբ մասսայական սխրանքների կոչեց կենաց ու մահու գոտեմարտի ելած ժողովրդին։

---

16 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 1, էջ 221։

17 Նույն տեղում, էջ 216։

18 «Երեկոյան Երևան», 31. III. 1980։

19 Նույն տեղում։

20 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 1, էջ 217։

ИЗ ИСТОРИИ ВОЕННО-ПАТРИОТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РАБОТНИКОВ ИСКУССТВА РЕСПУБЛИКИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

ВАГАН ПОГОСЯН

Резюме

В годы тяжелых испытаний в соответствии с военными условиями была перестроена деятельность работников культурного фронта. Творческая интеллигенция развернула огромную работу по выявлению массового героизма народа, мобилизации материальных и духовных сил республики во имя победы, пробуждая в народе лютую ненависть к врагу, побуждая его к активной борьбе с фашизмом.